ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձոր քաղաքի

Հովհ.Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմն. դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Պարզ նախադասությունները Վիլյամ Սարոյանի «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքում

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Լիանա Խաչատրյան

ԽՈՒՄԲ՝ III

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լիլիթ Մարկոսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1. Շարահյուսության ուսուցման առանձնահատկությունները դպրոցում.....5

2. Պարզ նախադասությունների ուսուցումը 9-րդ դասարանում՝ Վիլյամ Սարոյանի «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքի միջոցով.....13

Եզրակացություն….....17

Օգտագործված գրականության ցանկ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից կրթական համակարգում անհրաժեշտություն է առաջանում նորովի մատացում հանդես բերել լեզվի ուսուցման մեթոդաբանության նկատմամբ: Կրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով բարեփոխում ու արդիականացվում է, ուստի ուսուցիչը պետք է հասցնի քայլել ժամանակին համընթաց, ձեռք բերի համապատասխան կարողունակություններ, որպեսզի շարունակի կատարել կրթելու ու դաստիարակելու իր գործառույթն արդյունավետ: Կրթական համակարգի բարեփոխումների ներկա փուլում առաջնահերթ խնդիրը կրթության որակի ապահովումն է, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծումը, որտեղ սովորողը կարող է անցնցում ձեռք բերել իմացական ու գործառական գիտելիքներ: Գիտելիքների հաղորդմանը զուգահեռ՝ սովորողը պետք է դառնա հետազոտող, ստեղծարար, ունենա քննադատական ու պատկերավոր մտածողություն, կարողանա սեփական դիրքորոշումն անկաշկանդ արտահայտել: Այս համատեքստում այսօր ընդունված է նախապատվություն տալ աշակերտակենտրոն ուսուցմանը, որտեղ սովորողը ուսումնական գործընթացում ունի ավելի ակտիվ դերակատարում: Այդ դերը կենտրոնացնելու, սովորողին ինքնուրույն գործելու և նախաձեռնողի դերում հանդես գալու համար լայն հնարավորություններ են ստեղծում ուսուցման փոխգործուն մեթոդների կիրառումը, նախագծային աշխատանքների իրականացումը, ՏՀՏ բաղադրիչի գործածությամբ դասերը, ինտեգրված ուսուցումը, որոնք լիովին համապատասխանում են աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներին և արդյունավետ են:

Հանրակրթական դպրոցում լեզվի դասավանդումը ինչպես աջակցում է սովորողների ընդհանուր խոսքային ու հաղորդակցական կարողությունների զարգացմանը, ձևավորում է լեզվամտածողությունն ու լեզվական գրագիտությունը, այնպես էլ վերջիններիս մոտ ձևավորում ու զարգացնում է ստեղծագործական, պատկերավոր մտածողությունը, հարստացնում է բառային պաշարն ու ձևավորում քերականորեն ճիշտ կառուցված խոսք: Այս համատեքստում առանձնակի կարևորություն ունեն շարահյուսական գիտելիքները: Շարահյուսությունը քերականության երկու հիմնական բաժիններից մեկն է, որն ուսումնասիրում

է բառերի գործառական կիրառությունները, նրանց կապակցությունները, նախադասությունները, սրանց կառուցվածքային տիպերը և կապը միմյանց հետ: Շարահուսության հիմնական խնդիրը, այդպիսով, լեզվի շարահյուսական միավորների և դրանք պայմանավորող քերականական հարաբերությունների քննությունն է: Այդ միավորներն են՝ նախադասության անդամները, բառակապակցությունները և նախադասությունները: Այսպիսով, նախադասության, դրա անդամների, տեսակների ուսուցումն առանձնակի կարևոր կարելի է համարել սովորողների խոսքի՝ կառուցվածքային առումով ճիշտ ու գրագետ զարգացման տեսանկյունից, ուստի ուսումնական առարկայի այս բաժինը նույնպես նպատակահարմար է ուսուցանել ժամանակակից տեխնոլոգիաների կիրառությամբ: Այս համատեքստում առանձնակի կարևորության հիմնահարց է, որ ուսուցչի կողմից դասի պլանավորման ժամանակ հաշվի առնվեն ուսուցման ժամանակակից մեխանիզմները: Սույն հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորված է հայոց լեզվի դասավանդման ընթացքում աշակերտակենտրոն մոտեցումների կարևորմամբ, որից կախված է դասապրոցեսի արդյունավետությունը, սովորողների առաջադիմությունն ու համաչափ մասնակցությունը դասին:

Հետազոտության նպատակը: Դիտարկել պարզ նախադասությունների ուսուցման մանկավարժական մոտեցումները Վիլյամ Սարոյանի «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքի միջոցով: Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են ներքոբերյալ **խնդիրները.**

1. Ցույց տալ ուսուցման մեթոդների ճիշտ ընտրության դերն ու նշանակությունը հայոց լեզվի դասին՝ որպես սովորողների առաջադիմության բարձրացման գործիք:
2. Շեշտադրել ակտիվ ու աշակերտակենտրոն դասի դերը սովորողների համագործակցային, նախաձեռնողական, ստեղծագործական և այլ ունակությունների ձեռքբերման ու շարահյուսական գիտելիքների զարգացման գործում:

1. Շարահյուսության ուսուցման առանձնահատկությունները դպրոցում

Նախադասությունը, իբրև լեզվական միավոր, կազմված է լինում մեկ կամ մի քանի բառերից, որոնք, որոշակի կապի ու հարաբերության մեջ մտնելով, ձևավորում են այն և վերածվում նախադասության անդամների կամ միավորների: Սակայն նախադասության կազմում հանդես եկող ամեն բառ դեռևս նախադասության անդամ չէ: Նախադասության անդամի համար կարևոր է նրա՝ շարահյուսական ինքնուրույն պաշտոն կատարելը: Ըստ Ս. Աբրահամյանի՝ նախադասություն կազմող այն բառերն ու բառակապակցությունները, որոնք շարահյուսական ինքնուրույն պաշտոն են կատարում, կոչվում են նախադասության անդամներ[1]: Նախադասության ձևավորման գործում բոլոր անդամները միատեսակ դեր ու նշանակություն չունեն: Որոշ անդամներ էական դեր են կատարում մյուսների համեմատությամբ, այդ պատճառով նրանց առկայությունը պարտադիր և անհրաժեշտ է նախադասության ձևավորման գործում: Լեզվի շարահյուսական մակարդակի հիմնական առանցքը պարզ նախադասությունն է՝ իր գլխավոր ու երկրորդական անդամներով և մեկ ստորոգումով: Այսինքն՝ նախադասությունը կազմվում է բառերով ու բառակապակցություններով, իսկ բառերը ձևաբանական մակարդակի միավորներ են՝ խոսքի մասերը, որոնք նախադասության մեջ արդեն դառնում են անդամներ՝ ենթակա, ստորոգյալ, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ և բայական անդամի լրացումներ՝ խնդիրներ ու պարագաներ: Շարահյուսական մակարդակում նախադասության անդամները բաժանվում են երկու խմբի՝

ա/ *նախադասության գլխավոր անդամներ*,

բ/ *նախադասության երկրորդական անդամներ*:

Գլխավորները նախադասության ստորոգումային անդամներն են՝ ենթական ու ստորոգյալը: Ենթական նախադասության երկու գլխավոր անդամներից մեկն է, որը ցույց է տալիս, թե ով կամ ինչն է կատարում ստորոգյալի մատնանշած գործողությունը: Ենթական նախադասության այն անդամն է, որին ստորոգումով վերագրվում է որևէ հատկանիշ: Հայերենում ենթական դրվում է ուղղական հոլովով և

[1] Ս. Աբրահամյան, «Ժամանակակից հայերենի քերականություն», Երևան, 1969, էջ 285-288:

պատասխանում է *ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ, ինչե՞ր* հարցերին։ Հայերենում նախադասության ենթական արտահայտվում է՝

- գոյականներով
- դերանուններով
- փոխանվանաբար գործածված ածականներով
- թվականներով
- դերբայներով և այլն։

Ստորոգյալ, նախադասության երկու գլխավոր անդամներից մեկն է, որը տորոգման միջոցով որևէ հատկանիշ է վերագրում ենթակային, այսինքն՝ ցույց է տալիս, թե ինչ է անում, ինչ է լինում կամ ինչ է, ինչպիսին է ենթական։ Ստորոգյալը լինում է պարզ կամ բաղադրյալ։ Պարզ ստորոգյալն արտահայտվում է միայն խոնարհված բայով, այդ թվում՝ հարադիր բայով ու զուգաբայով, բաղադրալ ստորոգյալը կազմվում է որևէ այլ խոսքի մասով (գոյական, ածական, դերանուն, մակբայ, կապական կապակցություն) կամ անկախ դերբայով ու հանգույցով։ Վերջինս հիմնականում արտահայտվում է օժանդակ բայի միջոցով։ Ստորոգյալին տրվող հարցերը պայմանավորված են նրա բնույթով։ Եթե ստորոգյալը բայական է, պատասխանում է *ի՞նչ է անում, ի՞նչ արեց, ի՞նչ կանի, ի՞նչ է արել* և նման հարցերի։ Եթե ստորոգյալն բայանվանական է, պատասխանում է *ո՞վ է, ի՞նչ է, ինչպիսի՞ն է, ի՞նչ դարձավ* և այլն։

Նախադասության տեսակների ուսուցումն իրականացվում է՝ սկսած տարրական դպրոցից «Մայրենի» առարկայի դասավանդման շրջանակներում։ Հաջորդիվ՝ հանրակրթական դպրոցի միջին և ավագ օղակներում գիտելիքներն առավել խորացվում և ծավալվում են։ Տարրական դասարաններում մայրենի լեզվի քերականության դասավանդման հարցը մշտապես երկարատև բանավեճի առարկա է եղել, հակասական կարծիքներ են արտահայտել լեզվաբան-մեթոդիստները։ Լեզվաբան Մ. Աբեղյանն նշում է. «Անշուշտ, աշակերտը իր մայրենի լեզվի ձևերն էլ, այդ ձևերի նշանակությունն էլ հասկանում է առանց քերականության, բայց հասկանում է մի տեսակ բնազդաբար, խառն, անջատ-անջատ, իսկ քերականության ուսուցումը մայրենի լեզվի լեզվական ձևերի ու դրանց նշանակության ըմբռնումը

բնազդականից դարձնում է գիտակցական, խառն իմացումից՝ կապակցված, ամբողջական ու ընդհանրացված»[2]: Կարծում ենք՝ տարրական դասարաններից շարահյուսական գիտելիքները պետք է ուսուցանվեն արդյունավետ, քանի որ հենց այդ հիմքի վրա են հետագայում դրանք ընդլայնվում ու խորացվում:

Լեզուն մտածողության միջոց է, որի ուսումնասիրությունը խթանում է սովորողի քննադատական, պատկերավոր ու ստեղծագործական մտածողությունը, զարգացնում հաղորդակցական հմտությունները, նպաստում բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը, տալիս լեզվական գրագիտություն: Այս տեսանկյունից առանցքային նշանակություն ունի նախադասության տեսակների և նրա անդամների ուսուցումը, ինչը մեծապես կարող է օգնել նաև սովորողների բանավոր խոսքի ձևավորմանն ու հարստացմանը: Բանավոր խոսքի զարգացումը չի կարող առանձնացվել մտավոր զարգացումից: Անընդհատ մտավոր գործունեություն կատարող սովորողի միտքը գնալով ավելի կազմակերպված է դառնում, հետևապես նաև խոսքն է լինում տրամաբանված և իմաստալից: Սահուն խոսքը մտավոր բարձր զարգացման արդյունքն է: Պետք է պայմաններ ստեղծել խոսքի առաջացման համար, ինչպես նաև խոսքի ուսուցման գործընթացում հարկավոր է խոսքի պլանավորված հերթականությամբ առաջ գնալ: Կարևոր է պայմաններ ստեղծել սովորողների խոսքի մոտիվացիայի համար, ինչը նրանց խրախուսում է, իսկ խոսքն անհամեմատ ակտիվանում է: Խոսքի մոտիվացիայի առկայությունը նշանակում է, որ երեխան ունի ներքին մոտիվացիաարտահայտել իրմտքերը: Դա տեղի է ունենում հաղորդակցության հանգիստ, բնական միջավայրում[3]:

Լեզվի ուսուցումը կրտսեր դպրոցում պայմանավորված է կապակցված խոսքի ձևավորմամբ, բառային ֆոնդի ընդլայնմամբ, քերականական մի շարք գիտելիքների հաղորդմամբ՝ այդ թվում խոսքիմասային կաղապարների, նախադասության տեսակների և անդամների ուսուցում: Մինչդեռ կարող ենք նկատել, որ միևնույն դասարանի սովորողների շրջանում կարող են հանդիպել տարբեր մակարդակի օժտվածության, առանձնահատուկ կրթական պայմանների կարիք ունեցող

[2] Մ. Աբեղյան, «Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1965, էջ 59:

[3] В. И. Яшина, М. М. Алексеева,«Теориа и методика развития речи детей», էջ 12:

երեխաներ, ինչը կարող է ուսուցման գործընթացում հնարավոր դժվարությունների պատճառ հանդիսանալ: Հենց այս համատեքստում է, որ ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության վրա մեծապես կարող է ազդել աշակերտակենտրոն ուսուցումը: Ուսուցչի համար անչափ կարևոր է, որ մեթոդական աշխատանքը (ուսուցման բովանդակությունն ու ձևերը) կատարվի տրամաբանորեն հիմնավորված, և նյութի մատուցման ձևը համապատասխանի բովանդակությանը: Լեզու դասավանդողի կարևորագույն խնդիրներից են՝ ապահովել ուսուցման որակական նոր մակարդակ և գործնական ուղղվածություն, բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը, ուստի անչափ կարևոր է դասավանդման գործընթացում հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի անհատական պահանջմունքները, նրա օժտվածությունն ու դրա բացակայությունը: Ուսուցչի մանկավարժական գործունեության սկզբունքներից է սովորողի ուսուցման, դաստիարակության եւ զարգացման նկատմամբ անհատական նպատակաուղղված մոտեցումը[4]: Որպեսզի ուսուցանվող նյութը սովորողների համար լինի մատչելի, տեսանելի գործնական կիրառության մեջ ունենա արդյունավետություն, նպատակահարմար է, որ ուսուցիչը դասի պլանավորման մեջ կիրառի փոխգործուն կամ ինտերակտիվ ուսուցման մոդելը:

Սովորողին դասի կենտրոնում պահելը բավականին նպաստավոր կարող է անդրադառնալ վերջինիս աշխատունակության բարձրացման առումով: Փոխգործուն մեթոդների կիրառությունը թույլ է տալիս, որ սովորողները անընդհատ լինեն համագործակցության մեջ, երկխոսեն, քննարկեն ուսուցանվող նյութը, միասին գտնեն հարցերի պատասխաններն ու գործնական կիրառության մեջ դնեն իրենց տեսական գիտելիքները: Փոխգործուն մեթոդները նպաստում են սովորողների մտածողության զարգացմանը, սեփական կարծիք հայտնելուն, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են, որոնց նպատակն է համատեղ որոնումներ կատարել, ընդհանուր նպատակի համար որոշումների կայացնել ու իրագործել: Տարրական դասարաններում այս

[4] ՀՀ օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին, հոդված 4, կետ «ա»:

հարցն առանձնակի կարևորություն ունի, քանի որ հաճախ սովորողների ուշադրությունը համակարգելու կարիք է առաջանում, իսկ ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը հնարավորություն է ունենում բոլոր սովորողների համար ապահովել համաչափ մասնակցություն դասապրոցեսին:

Ինչպես նշել էի՝ ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներին:

Աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներն են.

- փոխուսուցումը, համագործակցություն
- ակտիվությունը,
- կարծիքի, դիրքորոշման, ցանկության անկաշկանդ արտահայտում,
- դասին սովորողների համաչափ մասնակցություն:

Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են.



Փոխգործուն մեթոդների արդյունավետ կիրառման համար յուրաքանչյուր ուսուցիչ ազատ է: Ընդ որում՝ նա կարող է հանգիստ դրանք փոփոխության ենթարկել՝հարմարեցնելով դասարանի պահանջներին: Մեթոդի ցանկացած կիրառում եզակի է և անկրկնելի: Կարող ենք պնդել, որ ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին, իր ունեցած մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից: Ինտերակտիվ ուսուցումը ենթադրում է երկխոսության միջոցով շփման կազմակերպում և զարգացում, որը նպաստում է

փոխհասկացվածությամբ և փոխներգործությամբ յուրաքանչյուրի համար անհատապես կարևոր խնդիրների լուծմանը[5]:

Անդրադառնանք դասավանդման փոխգործուն մի շարք մեթոդների, որոնց օգնությամբ կարելի է պլանավորել պարզ նախադասության ուսուցմանը վերաբերվող դասերը միջին դպրոցում:

1/«Խճանկար» մեթոդը փոխգործուն ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրույթների և որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները: Մեթոդին բնորոշ հատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և սովորողի, և սովորեցնողի դերերում:

9-րդ դասարանում հայոց լեզվի դասին կիրառելով «Խճանկար» մեթոդը՝ սովորողներին կարելի է հանձնարարել խմբեր կազմել և Վիլյամ Սարոյանի «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքից դուրս գրել պարզ նախադասությունները՝ կատարելով շարահյուսական վերլուծություն: Աշխատանքի ավարտին սովորողները կներկայացնեն իրենց աշխատանքները, և խմբերը կկատարեն փոխադարձ ստուգում: Նմանօրինակ հանձնարարությունների օգնությամբ սովորողները գործնականում կիրառում են իրենց գիտելիքները համատեղ գործունեության միջոցով, ինչը հնարավորություն է տալիս, որ վերջիններս սովորեն՝ միմյանց սովորեցնելով: Այս փոխգործուն մեթոդի առավելություններն են՝

- նյութի բազմակողմանի և ավելի խորը ուսումնասիրությունը.
- խմբային աշխատանքը հեշտացնում է նյութի ընկալումը.

[5] Լ. Ալեքսանյան, Ն. Թորոսյան, Մ. Պետրոսյան, «Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան», Երևան, 2004, էջ 26:

- աշակերտները հանդես են գալիս և՛ սովորողի, և՛ սովորեցնողի դերում, որն էլ ստիպում է լինել ուշադիր և պատասխանատու.
- ժամանակի ճիշտ և արդյունավետ օգտագործում.
- հաշվետու լինել կարողություն և անձնական պատասխանատվության ձևավորում.
- նյութը ներկայացվում է բազմապիսի ձևերով, ինչն էլ ընկալման և կրկնության բազմաթիվ հնարավորություններ է ընձեռում.
- մոտիվացիա և հետաքրքրությունների բավարարում.
- նոր նյութի յուրացում:

Պարզ նախադասության վերաբերյալ առավել խորքային ուսումնասիրություն կատարելու նկատառումներից ելնելով՝ կարելի է կիրառել նաև՝ T-աձև աղյուսակ, Գաղափարների քարտեզ, Վեննի դիագրամ, Բանավեճ, Խորանարդում, Զբոսանք պատկերասրահում, Երեք բանալի, մեկ կողպեք, Կարուսել, Քառաբաժան և այլ փոխգործուն մեթոդներ: Անշուշտ, ավանդական մեթոդները նույնպես ունեն իրենց դերն ու նշանակությունը դասավանդման գործընթացում, սակայն կարևոր է նաև փաստել, որ դպրոցականները օր օրի ավելի ակտիվ ու հետաքրքրասեր են դառնում, մեծանում է նրանց պահանջմունքների շրջանակը, որի վրա իր ուղիղ ազդեցությունն ունի համացանցը: Հետևաբար՝ ուսուցիչը նույնպես պետք է փորձի դասի կառուցվածքն այնպես ձևավորել, որ կարողանա սովորողին բերել դեպի դասապրոցես՝ ինչու չէ կիրառելով նաև ՏՀՏ գործիքներ: Այս առումով շատ կարևոր է մանկավարժական գիտակցությունը, որն էլ ուսուցչին կարող է մղել դեպի նոր նվաճումների ու հաղթանակների: «Ուսուցչն իրավունք ունի ընտրելու և կիրառելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ՝ իր ընտրությամբ օգտագործելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած դասագրքեր և ուսուցողական նյութեր, ձեռնարկներ և սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդներ»[6]: Փոխգործուն մեթոդներով ուսուցումը

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 7:

նաև հետաքրքիր է սովորողների համար: Շարահյուսության ուսուցման ընթացքում դասավանդման ժամանակ բավականին արդյունավետ է կիրառել նաև Վենի դիագրամը, որը կառուցվում է 2 կամ ավելի շրջագծերով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Ջոն Վենը հորինել է Վենի դիագրամը 1980 թվականին, և այն շարունակաբար օգտագործվում է մինչև այսօր: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները կամ հատկությունները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը բացահայտելու համար:

Այս կերպ սովորողի համար տեսանելի է դառնում ենթակայի և ստորոգյալի ընդհանուր եզրերն ու տարբերությունները: Նաև կարելի է դիագրամ կառուցել պարզ և բարդ նախադասությունները տարբերակելու համար:

Այսպիսով, կարծում ենք, որ փոխգործուն մեթոդների կիրառումը շարահյուսության ուսումնասիրման ընթացքում կարող է ունենալ բացառապես դրական ազդեցությունը: Դասարանը համաչափ կմասնակցի դասին, սովորողները կլինեն ակտիվ, հնարավորություն կունենան միմյանց օգնելու: Այս կերպ սովորողի համար տեսանելի է դառնում ենթակայի և ստորոգյալի ընդհանուր եզրերն ու տարբերությունները, նախադասության կազմությունը, ինչը բավականին արդյունավետ է ընկալման տեսանկյունից, քանի որ ամեն բան տեսանելի է ու հստակ:

2. **Պարզ նախադասությունների ուսուցումը 8-րդ դասարանում՝ Վիլյամ Սարոյանի «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքի միջոցով**

Հետազոտական աշխատանքի տեսական մասում մեր կողմից թվարկած գիտելիքները, հմտություններն ու կարողությունները սովորողը ձեռք կբերի այն պարագայում, երբ ուսուցիչը ճիշտ ու կառուցողական է վարում դասը՝ հաշվի են առնված սովորողների անհատական պահանջմունքները, դասը հագեցած է դիդակտիկ նյութերով ու զննական պարագաներով, դասին կիրառվում են մի շարք ժամանակակից մեթոդներ, որոնք կարող են ոգևորել սովորողին ու պահել ակտիվ դաշտում: Դիտարկենք օրվա դասի պլանավերում «Հայոց լեզու» ուսումնական առարկայից՝ պարզ նախադասությունների ուսուցումը 9-րդ դասարանում՝ Վիլյամ Սարոյանի «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքի միջոցով թեմայից:

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ՝ ՓՈԽԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՄԲ

- **Առարկան**՝ «Հայոց լեզու»
- **Դասարանը**՝ 9-րդ
- **Դասի թեման**՝ Պարզ նախադասությունների ուսուցումը 8-րդ դասարանում՝ Վիլյամ Սարոյանի «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքի միջոցով
- **Դասի տիպը**՝ Ամփոփման դաս, գիտելիքների համակարգման դաս

Դասի նպատակները՝

- Ամփոփել սովորողների գիտելիքները շարահյուսությունից:
- Ամրապնդել գիտելիքները նախադասության գլխավոր և երկրորդական անդամների, պարզ նախադասությունների վերաբերյալ:
- Զարգացնել վերլուծելու, բանակցելու, բանավիճելու կարողությունները, խթանել հաղորդակցական հմտությունները:
- Զարգացնել սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական ու քննադատական մտածողությունը:
- Զարգացնել սովորողների լեզվամտածողությունն ու խոսքային կարողությունները:

Ակնկալվող վերջնարդյունքները՝

- Հաղորդակցվի և համագործակցի վստահորեն, դրսևորի հանդուրժողականություն:
- Կարողանա ճիշտ ձևակերպել հարցը և որոնել լուծման ուղիները:
- Հիմնավորի և մեկնաբանի սեփական տեսակետը:
- Կարողանա տրված տեքստից դուրս գրել պարզ նախադասությունները, կատարել շարահյուսական վերլուծություն:
- Կազմի պարզ նախադասություններ:

Կարողունակություններ, որոնք կզարգանան դասի ընթացքում՝

- Սովորել սովորելու կարողունակություն
- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- Լեզվական գրագիտություն և կարողունակություն

Դասի կահավորումը՝ ցուցապաստառ, համակարգիչ, քարտեր:

Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ և հնարներ՝

- Խճանկար
- Մտքերի քարտեզագրում
- ԳՈՒՍ
- Մտագրոհ

Դասի ընթացքը

Մտագրոհի միջոցով կհամակարգենք սովորողների նախագիտելիքները նախադասության, դրա անդամների ու տեսակների վերաբերյալ: Բանալի բառերը, համապատասխան սահմանումները կգրառվեն գրատախտակին:

Հաջորդիվ կկիրառվի Խճանկար մեթոդը: Կկազմվեն 4 աշխատանքային խմբեր, որոնք կուսումնասիրեն միևնույն թեմայի ենթաթեմաները՝ կատարելով աշխատանք բնագրով: Որպես բնագիր՝ կընտրվի Վիլյամ Սարոյանի «Գեղեցիկ սպիտակ ձիու

ամառը» պատմվածքը: Աշխատանքի ավարտին խմբերը կկատարեն փոխադարձ ստուգում:

Առաջադրանքի օրինակ.

Խումբ 1.

1. Բնագրից գտե՛ք և դու՛ս գրեք պարզ համառոտ նախադասությունները:
2. Պարզ համառոտ նախադասությունները ընդարձակե՛ք՝ ավելացնելով գոյականական և բայական անդամի լրացումներ:
3. Դու՛ս գրեք պարզ ընդարձակ նախադասություններ և նշե՛ք ենթակաների արտահայտություններն ու ստորոգյալների տեսակները:
4. Դու՛ս գրեք դերանուններով, դերբայներով, ածականներով արտահայտված ենթականերով պարզ նախադասություններ:
5. «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքից դու՛ս գրեք բաղադրյալ ստորոգյալ ունեցող պարզ նախադասություններ:

Աշխատանքը կամփոփվի խմբային քննարկումների միջոցով: Սովորողները հնարավորություն կունենան փոխադարձ հարցադրումներ կատարելու:

Հաջորդիվ սովորողները մտքերի քարտեզագրման մեթոդական հնարով կգրառեն պարզ նախադասությունների հետ առնչվող սահմանումները՝ բերելով համապատասխան օրինակներ: Աշխատանքը կանցկացվի զույգերով: Այստեղ նույնպես աշխատանքի ավարտին զույգերը կկատարեն փոխադարձ ստուգում:

Կկիրառվի ԳՈՒՍ մեթոդը: Սովորողները բանավոր կպատասխանեն հետևյալ հարցերին՝

- **Գիտեի**
- **Ուզում էի իմանալ**
- **Սովորեցի**

Դասն ամփոփելու նպատակով կիրականացվնի բանավոր հայտորոշիչ հարցում, սովորողները կպատասխանեն հարցերին՝ հնարավորություն ունենալով, լրացնելու դասընկերների բացթողումներն ու շտկելու միմյանց:

Դասի ավարտին սովորողները կլրացնեն ինքնագնահատման ռուբրիկ

Դասը հետաքրքի՞ր էր քեզ համար:	ԱՅՈ	ՈՉ
Խմբային աշխատանքին ակտիվ մասնակցություն ունեցա՞ր:	ԱՅՈ	ՈՉ
Ի՞նչ նոր բան իմացար		
Կա՞ր մի բան, որ պակասում էր քեզ դասին:		

Այսպիսով, ստորև դիտարկենք ուսուցման փոխգործուն և պասիվ մեթոդներով անցկացված 2 տարբեր դասերին սովորողներին տրված հայտորոշիչ առաջադրանքների արդյունքները: Նշենք, որ հետազոտությունն անց ենք կացրել 9-րդ դասարանում /26 սովորող/:





ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքի վերլուծության արդյունքում կատարեցինք մի քանի արձանագրումներ, որոնք կամբողջացնենք, ընդհանրական տեսքի կբերենք ստորև: Լեզվական կարողունակության զարգացումը, այդ թվում՝ շարահյուսական գիտելիքների ուսուցումը հայոց լեզվի դասավանդման ժամանակ անմիջական գործընթաց է, ուստի մանկավարժը պետք է բանավոր խոսքի զարգացման, շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ, որպեսզի ամեն կերպ խրախուսվի անհատի գիտակցումը, ինքնուրույնության կարևորությունը աշակերտի մոտ, վերջինս կարողանա ճիշտ կառուցվածքով խոսք կառուցել: Եթե ուսուցիչը նպատակ է դրել զարգացնել դպրոցականի շարահյուսական գիտելիքները, ապա պետք է ուսուցման ընթացքում շեշտը դնի սովորողնակենտրոն մոտեցումների վրա, որպեսզի սովորողի դերը դասին լինի հնարավորինս ակտիվ ու մասնակցային:

Կարևորագույն բաղադրիչ է նաև դասին տիրող բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը, ինչը թույլ կտա, որ սովորողը նախաձեռնողի դերում լինի, ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել ուսումնական հաստատությունից դուրս: Այս հարցում պակաս կարևոր չէ սոցիալական միջավայրի՝ այս պարագայում դասարանի ընդհանրական դերը: Չէ՞ որ հենց այստեղ է նա անցկացնում օրվա մեծ մասը:

Կցանկանայինք նշել նաև լեզվական գիտելիքների զարգացմանը նպաստող հաջորդ բաղադրիչը, այն է՝ զանազան մեթոդների կիրառություն, ակտիվ, գործուն դասեր, խմբային ու գործնական աշխատանքներ, միջառարկայական կապերի ստեղծում: Երկխոսության, մենախոսության, նպատակային զրույցի օգնությամբ ուսուցիչը կարող է խթանել, որ պասիվ բառապաշարից աշակերտը ավելի հաճախ օգտվի և սկսի անկաշկանդ արտահայտել սեփական մտքերը, որոնք, համաձայն շարահյուսական գիտելիքների, կլինեն քերականորեն ճիշտ կառուցված: Հայոց լեզվի դասաժամերին ճիշտ կառուցված խոսքի զարգացման համար պետք է ստեղծվի հաղորակցության հատուկ իրավիճակ, որտեղ ուսուցիչը պետք է հատուկ խնդիրներ առաջադրի, իսկ սովորողը ազատ և անկաշկանդ մասնակցություն ցուցաբերի այդ իրավիճակներին, որոնց ընթացքում զարգանում է բառապաշարը, մտքի արտահայտման եղանակները, մի խոսքով ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որտեղ զարգանում է կրտսեր դպրոցականի խոսքը:

Փորձենք կատրել մի քանի ամփոփ արձանագրումներ ևս.

- Հայոց լեզվի դասագործընթացին հարկավոր է սովորողների համար ապահովել ինքնուրույն գործելու, նախաձեռնողի դերում հանդես գալու, սեփական կարծիքն ու հիմնավորված փաստարկներն արտահայտելու հնարավորություն: Այսպես սովորողն ավելի է ոգևորվում և հետաքրքրվում առարկայով:
- Մի շարք առանցքային կարողունակությունների զարգացման, սովորողին մնայուն շարահյուսական գիտելիքով ապահովելու նկատառումներից ելնելով՝ հարկ է, որ ուսուցիչը վերանայի առարկայի դասավանդման մեթոդական իր զինանոցը՝ նախապատվություն տալով կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթական մոդելին:
- Կրթական արդի բարեփոխումների շրջանակներում կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունը, ինչպես նաև փոխգործուն մեթոդներով պլանավորված դասագործընթացը մեծապես նպաստում են սովորողների մեջ հետազոտական ու ստեղծագործական ունակություններ զարգացնելուն, մտածողության տարատեսակների ամրակայմանը, դասին մասնակցելիության մակարդակի բարձրացմանը:
- Հայոց լեզվի դասավանդման շրջանակներում չափորոշչային պահանջներին համապատասխան պլանավորված, ՏՀՏ գործիքներով, զննական պարագաներով ու դիդակտիկ նյութերով հագեցած, փոխգործուն մեթոդների կիրառությամբ դասագործընթացը ունի բոլոր նախադրյալները կրթության բարձր որակ և սովորողների առաջադիմություն ապահովելու համար:
- Հայոց լեզվի դասավանդման ընթացքում ցանկալի է, որ ուսուցիչը զերծ պահի սովորողին մեխանիկական վերարտադրումից. ցանկացած միտք պետք է լինի կշռադատված, օրինակներով ու փաստերով հիմնավորված:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին:
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
3. Ս. Աբրահամյան, «Ժամանակակից հայերենի քերականություն», Երևան, 1969:
4. Մ. Աբեղյան, «Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1965:
5. Լ. Ալեքսանյան, Ն. Թորոսյան, Մ. Պետրոսյան, «Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան», Երևան, 2004:
6. В. И. Яшина, М. М. Алексеева,«Теориа и методика развития речи детей».